

ունենան : Ինչպէս բերդն ու քաղաքը , նոյնպէս գեղերն ու գաւառը իրենց ունեցած կործանուած վանքերով , տաճարներով եւ բնակարաններով այնպիսի վիճակի մէջ են , որ կարծես թէ՛ հողեւարք են քաշում :

Բայրուրդի հմուտ արհեստաւոր եւ անձնավստահ զաւակները , ինչպէս քաղաքից նոյնպէս եւ գեղերից պարբերաբար Կ.Պոլիս եւ ուրիշ տեղեր դաղթելով , պանդխտելով՝ ցրուեցան , յաջորդներ եւ արհեստագէտ ժառանգորդներ չթողին : Բայրուրդի ժողովուրդն էլ Հովտիկի նման բնիկ է , իսլամն ընդունած եւ թրքախօս , նախկին ոստանիկազատական սերնդից : Ինչ որ ասացինք Հովտիկի մասին , կրկնելու կարիք չկայ :

Ճորոխի աջ ափին գտնուում են Ուրումէլի , Ալմշկա , Վանֆ , Թաուֆ (Հաուկ) , Խոփուր , Խայէկ , Քարաւեր , Տանձոտ եւ Իշրոնոս գեղերը , որոնց միջից անցնում են համանուն վտակներն ու ոռոգում են այդ գեղերի հանդերը : Իսկ ձախ ափից միանում է Բալախոռ վտակը : Վերջին միջազգային պատերազմից առաջ Ալմշկա , Առիւծկա , Աւերակ (Էվէրեկ) , Լուսհոնգ կամ Լուչոնք , Խայէկ , Սղըրջիկ գեղերը Հայեր էին ապրում , որոնցից այսօր միայն աւերակներ են մնացել :